ԳԼՈՒԽ ՄԲ.

Մի լեցի երաշխաւոր վասն ոչինչ իրի, ոչ քահանայ, և ոչ կին.

ԳԼՈՒԽ ՄԳ.

Մի լեցի կտակատար ննջեցելոյ էկլէգիաստիկ։

ԳԼՈՒԽ ՄԴ.

Մի ոք այլ ազգ գոցէ պաշտօն 'ի տանէն հայոց բայց 'ի սեպհական ազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ՄԵ.

Մի ոք հաւատացելոց 'ի Քրիստոս այլ աղանդաւ գոցի պաշտօն 'ի տանէն հայոց բայց աւանդութեամբ Սրբոյ Եկեղեցւոյ հայաստանեաց։

ԳԼՈՒԽ ՄԶ.

Ով ոք ամուսնացեալ միով ամուսնութեամբ գոցի շնորհ 'ի Տեառնէ որ բազմեսցի 'ի վերայ սեղանոյ տան իւրոյ, այր և կին երկոտասան որդոք, սոքայ ամենայն աւուրս այս ցանկալի ժամանակին կենաց իւրեանց 'ի տանէն հայոց գըտցեն երկոտասան հացս։